



ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Երևան ք.

____.____.____ թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Միքայել Նարիմանյանի, մի կողմից և Համալսարանի հետբուհական կրթության մասնագիտության կլինիկական օրդինատուրայի

(մասնագիտության անվանումը)

(այսուհետ՝ Կլինիկական օրդինատուրա) սովորող _____

(անուն, ազգանուն)

(այսուհետ՝ Կլինիկական օրդինատոր), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1) սույն պայմանագրի առարկան Համալսարանի կողմից Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական ուսումնական գործընթացի կազմակերպումն է:

2) սույն պայմանագրի իրավական հիմքը «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներն են և այլ իրավական ակտեր:

3) սույն պայմանագիրը Համալսարանի և Կլինիկական օրդինատոր հետ կնքվում է հետբուհական կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրերով նախատեսված _____ տարի ժամկետով:

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

1) իր ինքնավարության և իրավասությունների շրջանակներում կազմակերպելու ուսումնական գործընթացը .

2) սահմանելու և իրականացնելու Կլինիկական օրդինատորի ատեստավորման ձևերը և կարգը՝ ելնելով մասնագիտական ուսումնական ծրագրերից .

3) ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքում Կլինիկական օրդինատորի նկատմամբ կիրառելու կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ Համալսարանից հեռացնելը .

4) սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վճարը չմուծելու դեպքում Կլինիկական օրդինատորին հեռացնելու Համալսարանից:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հետբուհական մասնագիտացման կրթական ծրագիրը, ապահովելով ուսումնական գործընթացն ապահովող բոլոր հնարավոր պայմաններով .

2) հսկողություն սահմանել Կլինիկական օրդինատորի ուսումնական ծրագրի կատարման ընթացքի և կարգապահության նկատմամբ .

3) հսկողություն սահմանել Կլինիկական օրդինատորի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ .

4) անցկացնել Կլինիկական օրդինատորի ստացած գիտելիքների ընթացիկ ատեստավորում՝ տարեկան երկու անգամ .

5) ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումն հանձնելու դեպքում Կլինիկական օրդինատորին շնորհել _____ դիպլոմ:

(մասնագիտության անվանումը)

4. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

1) մասնակցելու կրթական, հետազոտական ծրագրերին, գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին .

2) անվճար օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական և գիտական կառույցների ծառայություններից .

3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին .

4) օգտվելու ամենամյա արձակուրդից՝ որպես կանոն օգոստոս ամսին .

5) իրականացնելու հերթափոխային աշխատանք՝ կրթական բազա հանդիսացող բուժաստատությունում, միայն պատասխանատու բժիշկ մասնագետի հսկողության ներքո:

5. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

1) սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, մասնակցել սահմանված քննական գործընթացներին, իրականացնել անհատական ուսուցման ծրագիրը,

սահմանված կարգով մասնակցել պրակտիկ ուսուցման գործընթացին, հաճախել տեսական և հարակից առարկաների դասերին .

2) ծանոթանալ Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, Գլխիկական օրդինատորի իրավունքներին և պարտականություններին, ուսումնական գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին: Համալսարանի ներքին կարգապահական կանոններին և Օրդինատորի իրավունքներին ու պարտականություններին ծանոթացումը Գլխիկական օրդինատորի կողմից կատարվում է մինչև պայմանագրի կնքումը և հավաստվում է սույն պայմանագիրը ստորագրելով:

3) կատարել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները:

4) սահմանված կարգով և ժամկետներում մուծել ուսման վճարը:

6. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Բ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Բ

1) Գլխիկական օրդինատորի՝ վճարովի համակարգում սովորելու դեպքում մեկ ուսումնական տարվա ուսման վճարի չափը _____ դրամ է և այն ենթակա չէ փոփոխման

(գումարը թվերով և տառերով)

կրթության բոլոր տարիներին: Ուսման վճարը Համալսարանին վճարվում է փոխանցմամբ կամ կանխիկ: Ուսման վճարի վճարման ժամկետ է սահմանվում՝ առաջին տարվա առաջին կիսամյակի համար մինչև ուսումնական տարվա սկիզբը, իսկ հաջորդիվ տարիներին՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար կիսամյակի մեկնարկից հետո մեկ ամսվա ընթացքում: Այդ ժամկետում չվճարելու դեպքում Գլխիկական օրդինատորը կարող է ուսումնական գործընթացին մասնակցելուց զրկվել և հաջորդող 15-օրյա ժամկետում չմուծելու դեպքում կարող է հեռացվել Համալսարանից:

2) Գլխիկական օրդինատորի ուսման վճարը փոխհատուցվում է պետության կողմից՝ Գլխիկական օրդինատորայում ընդունելության արդյունքներով: Գլխիկական օրդինատորին պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

3) Գլխիկական օրդինատորի նախաձեռնությամբ, մինչև ուսումնական տարվա մեկնարկը, սույն պայմանագիրը լուծելու դեպքում ուսման վճարը վերադարձվում է, եթե նախապես վճարվել է, իսկ ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակների մեկնարկից հետո մեկ ամսվա ընթացքում Համալսարանի հետ սույն պայմանագիրը լուծելու դեպքում Գլխիկական օրդինատորը Համալսարանին վճարում է տարեկան ուսման վճարի՝ մեկ ամսվա գումարը, իսկ եթե ուսման վճարը վճարվել է՝ Համալսարանի կողմից վերադարձվում է ուսման վճարը՝ պահելով տվյալ կիսամյակի ուսման վճարից մեկ ամսվա գումար: Ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակների մեկնարկից մեկ ամիս հետո պայմանագիրը Գլխիկական օրդինատորի նախաձեռնությամբ լուծելու դեպքում ուսման վճարը չի վերադարձվում: Գլխիկական օրդինատորի հեռացվելու դեպքում տվյալ կիսամյակի ուսման վճարը չի վերադարձվում: Առաջին կիսամյակում հեռացվելու դեպքում երկրորդ կիսամյակի ուսման վճարը վերադարձվում է հրամանով ազատվելուց հետո հաջորդող ամսվա 1-ից: Որպես բացառություն՝ ուսման վճարը կարող է վերադարձվել, երբ Գլխիկական օրդինատորն առողջական պատճառներով ի վիճակի չէ ուսումը շարունակելու և ներկայացնում է բժշկական փաստաթուղթ: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին, որը սկսում է հաշվարկվել Գլխիկական օրդինատորի հրամանով ազատվելու օրվանից:

4) սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերից մեկի չկատարելու, կամ Համալսարանից Գլխիկական օրդինատորին հեռացնելու դեպքերում, կամ Գլխիկական օրդինատորի նախաձեռնությամբ:

5) սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից և ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

Կ Ո Ղ Մ Ե Բ Ի Հ Ա Ս Ց Ե Ն Ե Բ Ը Ե Վ Ս Տ Ո Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Բ Ը

**Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան**

Ռեկտոր Մ . Զ . Ն ա ր ի մ ա ն յ ա ն

(ստորագրություն և կնիք)

Գլխիկական օրդինատոր

(ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն)

(անձնագրի No, երբ և ում կողմից է տրված)

(հասցե)